

## ՔՆՆԵԿԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏՆՆԵԽՍՈՒԹԻՒՆ

Տ Ի Կ Ի Ն Ս Ի Պ Ի Լ

(Նրա «Յուրերի» առթիւ)

Վերջին տարիները մեր և արևմտեան հայոց մէջ բացուած արուեստական անշրպետը ունեցաւ մի շարք արտասուելի հետեանքներ, որոնք հզօրապէս արտայայտուեցին մանաւանդ մեր մտաւոր կեանքի ամբողջութեան վրայ: Տեղը չէ այստեղ մատնացոյց անել այս տխուր երևոյթի մանրամասնութիւնները, երևոյթ՝ որ բարեբախտաբար անցողական լինելու բոլոր նշաններն ունի: Նկատենք սակայն, որ հայութեան երկու խոշոր հատուածների մէջ մտաւոր շփումը համարեա ջնջուեց, առաջ եկաւ երկու գրականութիւն, որոնց փոխադարձ ազդեցութիւնն իրար վրայ, այնքան կրթիչ ու այնքան արգասաւոր ութսունական թուականներին՝ խալառ դադարեց: Աւելորդ է ասել, թէ մեր լեզուի և առհասարակ հոգևոր կեանքի զարգացման տեսակէտից մինչև ձր աստիճան ցաւալի հանգամանքներ է ներկայացնում այն թանձր մշուշը, որ ծածկում է իրարից արևելեան և արևմտեան հայ միտքը: Ո՞րքան ծանօթութիւն ունին թիւրքահայերը մեր արդի գրականութեան և գրագէտների մասին, այդ մենք չգիտենք, բայց անկասկած է, որ դա չափազանց մակերևոյթական, չափազանց սահմանափակ մի ծանօթութիւն է: Համարեա նոյնպիսի պայմանների մէջ ենք զբտընւում և մենք՝ նրանց վերաբերմամբ: Մենք միայն զգում ենք իրար, փոխադարձապէս, իրար նման էակներին յատուկ խորհրդաւոր կարողութեամբ: Ահա թէ ի՞նչու բոլոր սրտով ուրախ ենք, որ աւիթ ունենք մեր ընթերցողներին ներկայացրնել պոլսահայ գրական դէմքերից մէկին՝ և այն՝ կիւրղ Սիպիլին, այնպէս, ինչպէս նա երևան է զալիս իր բանաստեղծութիւնների Ժողովածուի՝ «Յուրերի» մէջ:

Տիկին Սիպիլ՝ Պոլսում հանրածանօթ գրական անուն է, մի քանի տասնեակ տարիներից ի վեր: Նրա փոքրիկ

պատմուածքները, կամ ինչպէս իրանք՝ թիւրքահայերն ասում են—նորավէպերը և բանաստեղծութիւնները կարելի է գտնել շատ պարբերական թերթերում: Նա ունի մի վէպ, կազմել է նաև հայերէն քերականութեան ձեռնարկ իր ամուսնու Հրանդ Ասատուրի աշխատակցութեամբ: Բայց նրա գրական գործերի մէջ աչքի ընկնող տեղ են բռնում իր բանաստեղծութիւնները, որոնցով նա անուն է հանել:

Տ. Սիպիլ արևմտահայոց գրականութեան մէջ առաջին սիմվոլիստ բանաստեղծն եղաւ, և այժմ արդէն հետևողներ ունի: Սիմվոլիզմը, որ ծայրայեղ զգայունութիւն, հիւանդագին ներբութեան հասած ճաշակ և որ գլխաւորն է, դէպի խորհրդաւորը, մշուշապատը հակամէտ խառնուածք է պահանջում, իր լաւ թարգմանը և հզօր արտայայտիչը գտաւ Սիպիլի կանացիութեան մէջ: Նրա «Յուլքերը» բնութեան բազմապիսի և նուրբ խոգերի, երանգների, անհատնում հմայքի, խորին գաղտնիքների մի ծնրագիր պաշտամունք է:

Ինքնուրոյն գաղափարներով, հասարակական մտտիւներով հարուստ չեն նրա երգերը և չէին էլ կարող լինել Պոլսում, ուր միտքը կաշկանդուած է այնպիսի կապանքներում, որոնց խիզախելը վեր է մարդկային կարողութիւնից: Կտրած մայր հողից, դժբախտութեան և արցունքի այն երկրից, որի անունն է հայ հայրենիք, բանաստեղծ տիկինը բնականօրէն անկարող է եղել ներշնչումներ վերցնել իր ցեղի հսկայ ցաւից: Նրա երեւակայութիւնը որչափ և լայն թևեր ունենար, ստիպուած էր սաւառնել միայն Բոսֆորի վրայ, և զգալու կարողութիւնը որքան նուրբ ու ուժգին լինէր, պէտք է բաւականանար իր նեղ շրջապատով: Այն էլ լաւ է, որ տաղանդաւոր բանաստեղծը իր սահմանափակ խեղդող մթնոլորտում կարողացել է ընտրել ամենից աւելի գրաւիչը, գեղեցիկը և բոլոր ասածների մէջ դրել է կանացի հմայիչ զգայնութիւնը: Բանաստեղծական անպայման և ստեղծագործող կարողութիւնից բացի, իր երգերը ուժեղ, գեղանկար և անուշ դարձնելու համար, ունեցել է արևմտեան հայոց ճոխ և ոլորուն բարբառը, որից նա օգտուել է սքանչելի կերպով:

«Մուրճի» այս համարում, ընթերցողներին ճաշակ տալու համար, հրատարակել ենք Սիպիլի երկու ոտանաւորները՝ «Ամպը» և «Յունիքը»: Բայց աւելի կատարեալ գաղափար կազմելու համար, մենք մէջ կը բերենք և այլ օրինակներ, որոնք կարծում ենք, կ'ապացուցանեն մեր վերի ասածները: Վերցնենք նրա «Մտէպը»: Իբրև մի զուտ տեսական հասկացողութիւն, իդէալը իր որոշ պրոգայիկ սահմանումն ունի, որ ընթացիկ կեանքում,

նոյնիսկ սովորական խօսակցութեան մէջ արտայայտուած է: Իդէալը բարձրագոյն և անպայման գեղեցկութեան, բարիի այն վերնագոյնն է, որ հէպի ուր յաւէտ ձգտում են մարդկային բոլոր կարողութիւնները, անյագուրդ իղձերը, խորունկ յոյզերը, հզօր միտքն և կորովը: Բայց այդ ձգտումը իր բազմապիսի յեղեղումներն ունի, որոնց հետ սերտ կերպով շաղկապուած են մեր հոգեկան բաւականութիւնն ու վիշտը, մեր խինդն ու լացը, մեր երջանկութիւնն ու ցաւը: Ահա հոգու այս անվերջ ու խենթ ձգտումը, նրա յարատե ցաւը, նրա երազները՝ իդէալին հասնելու համար, Միպլի կարողացել է բանաստեղծօրէն արտայայտել մի սիրուն ոտանաւորի մէջ: Եւ ինչ որ ուշագրաւ է, այդ մի հատիկ գաղափարի համար՝ բազմաթիւ գրաւիչ պատկերներ, դիւթիչ համեմատութիւններ է փոխառել իր պաշտած բնութիւնից: Նրա համար իդէալը՝

«Լուսնին շողն է, զոր կը մտի: շուտ արփին  
Հուր երազ մը, որ այգուն դէմ կը դեղնի,  
Փայլակն է այն շանթին վաղանց գարնանի,  
Ծաղիկ մ'որուն թերթերն հովէն կը թափին:  
Ծիածանին լոյս ժապաւէնն է նըրբին,  
Փշոտ վարդ մը, որմէ՛ լանջըդ կ'այրիւնի,  
Լուրթ կամարին հիւսիսայն է ծիրանի  
Միշտ փշրուող ծիւն փրփուրն է քարափին:  
Փետուր մըն է թռած կուրծքէն կարապին,  
Սուրբ համբոյր մը եթերին մէջ հոլանի,  
Ինչ որ հովը, օդը, ջուրը կը տանի,  
Իտէալն է՝ օրօրն հողոյն մըրափին:  
Կոյսն անմատոյց բոց տենչերու տարափին,  
Ըզմեզ կեանքին կապող ոսկի մատանի,  
Խըռովիչ հոյն անուրջներու պատանի,  
Սիրոյ երգը սըրտի խորունկ պարապին»:

Ահա իդէալը: Ո՞վ որ երբ և իցէ փայտայել է իր հոգու խորքում որեէ հեռաւոր, վարդագոյն երազ, որ ապրել, տքնել, լացել և խնդացել է նրա համար, որ արիւնտտել է իր ոտքերը յոյսի հեռաւոր ու մթապատ առապարներէ վրայ, և վերջ ի վերջոյ ճաշակել դառնութիւնը ծանր, շմեցնող յուսախաբութեան, հիվ, կըրկնում ենք, չի լացել Միպլիի պէս իր ցաւած սրտում մարդկային ողբալի ճակատագիրը: Ո՞վ չի զգացել, որ յերաւի իդէալը մերթ «փշոտ վարդ մ'է որմէ լանջըդ կ'այրիւնի», մերթ «ծաղիկ մ'որուն թերթերն հովէն կը թափին», «սիրոյ երգը սըրտի խորունկ պարապին» և մանաւանդ՝ «ըզմեզ կեանքին կապող ոսկի մատանի»:

Մարդկային մուսլ կեանքի, նրա անհանգիստ ու անհոգ հոգու տենչերի փիլիսոփայութիւնն է այս՝ դրուած մի քանի տողերի մէջ: Եւ այդ փիլիսոփայութիւնը թախծոտ է, ինչպէս գտնատ աշունը: Նրա մէջ չլսոււմ է ապրած կեանքի, անցած յոյսերի, միշտ խուսափող իրերի լացի դառն շեշտը: Ինչով և կամենանք գեղեցկացնել մեր գոյութիւնը, մեզ ճնշող սւք վանելու համար, այնուամենայնիւ, որպէս մեր ճակատագրին կապուած յաւիտենական ճմարտութիւն կը մնայ այն ծանր գիտակցութիւնը, ասոււմ է Սիպիլի թէ իդէալը՝ «միշտ փըշըրող ձիւն: փրփուրն է քարափին»: Եւ ջնայելով դրան, նա է որ մեզ կապոււմ է կեանքին, ինչպէս ոսկի օղակ, և առանց նրան չարժէ նոյնիսկ ապրել:

Բայց բանաստեղծը գոհ չէ այսքանով, նրա համար չափազանց քիչ է, որ երկինքը մարդու խեղճութիւնը նրա արտասուելի անզօրութիւնը մի փոքր ամոքելու համար տուել է իդէալը, երազելու դալուկ, վտիտ երջանկութիւնը: Չէ որ այդ ջնչին սփոփանքն էլ անցնում է, ինչպէս վարդի բոյր, վերջալոյսի շող, կամ ասուրբ համբոյր մը եթերին մէջ հոլանի»: Մեր կուրծքն աղմկող այսքան հուր տենչերը, մեր հոգին փոթորկող այս խօլ յոյզերը, որոնք բաղխոււմ են իրար, բիւր տանջանքների գնով մեր փոքրիկ, վայրկենական բախտը դարբնելու համար, այս բոյորը՝ ըստ Սիպիլի, մի աւելի լաւ վախճանի և մարդն ինքնին աւելի գեղեցիկ ճակատագրի էր արժան՝ քան ինչ նրան վիճակուած է: Եւ ահա նրա ճմարտութեան ծարաւ, ըմբոստ հոգին ճգնում է իմանալ, թէ ինչո՞ւ է այսպէս, ինչո՞ւ այս զարհուրելի անհամաչափութիւնը մարդկային ձգտումների, փայլակների պէս սրտերի խորքում հղզեհուող իդէերի և այս անյոյս անկարողութեան մէջ: Ինչո՞ւ համար այսքան պատրանք, անուշաբոյր ըմպելիով լի բաժակներ, որոնց յատակում միշտ թոյն է նստած, ո՞վ է վայելքներին խառնել այսքան դառնութիւն և վայրկենական ժպտին ընկեր տուել այսքան արցունք: Չլինի թէ ինքը երկինքը, որին դիմել են և դիմում են միլիոնաւոր սերունդներ կեանքի մեծ առեղծուածը լուծելու. իրօք ոչինչ չգիտէ և մարդն ինքն է դնում կապուտակ կամարի անհասութեան մէջ մտացածին խորհուրդ, անմիտ ցնորքներ: Եւ ահա բանաստեղծը դառնում է երկնքին.

Ո՞հ, ի՞նչ ես դուն, ծով անմատոյց ու խորին,  
 Ո՞ւր է արդեօք, ըսկիզբդ ու ծայրըդ բուկին,  
 Է՞ական մըն ես արդեօք եւ կամ սին պատկեր,  
 Պատրա՞նք վաղանց, ինչպէս բոլոր վայելքներ:  
 Մի՞թէ սուտ չէ, ինչ որ խորհուրդ կը կոչեն.

Քոյոր բոյրերն ու սէրերը պատրանք չե՞ն,  
 եւ մեր սիրտը՝ յիմար մողու, հէք մանկիկ,  
 Ծաղիկներու շուրջ կը յածի թափառիկ,  
 Կամ լուսատարփ օղակացիկ խօլ թիթեռ՝  
 Միշտ կը զոհուի բոցին՝ որ զինք կը դիւթէր:

Անհուն դարերից ի վեր մարդկային ծարաւ հոգին նոյն հարցերով դիմել է երկնքին, սերունդներ սերունդներ յետևից անջերը դէպի անհունը յառած՝ տառապել են ու անցել, բայց պատասխանը եղել է միշտ քար լուծիւնը, որ բրոնզէ կամաւորի պէս ծանրացել է յաւիտենական ճշմարտութեան վրայ: Եւ այդ անհասանելի լուծիւնն է, որ մերթ պաշտուել է, որպէս աստուածային խորհուրդը ծածկող անխորտակելի գրահ, մերթ վշտացած և անզօր մարդու կրծքից խլել է զայրոյթի սրտապատառ աղաղակներ: Յայտնի է Դուրեանի «Տրտունջը»: Ահա մօտաւորապէս նոյն ձևով, բայց աւելի զգուշաւոր, աւելի երկչոտ մի բողոք, ուր չի լսում այն անէծքի և կատաղութեան շեշտը, որ այնպէս ուժ և թափ է տալիս Դուրեանի օրհասական ճիչին: Միպիլի համար երկինքը «ոխերիմ աստուած» չէ, որին կ'ուզէր պլլուել ինչպէս կայծակ. նա չի թափում անէծքի տարափ, որպէս կին՝ նա աւելի մեղմ է իր դժգոհութեան մէջ և միայն կ'ուզէր, որ երկինքը գոնէ ազատէր մարդուն կրքերի փոթորկից, մեղմէր նրա ըղձերի բոցը, վերջ տար անհունը թևակոխելու իր խենթ ցանկութեանը:

Սակայն եթէ մեր աշխարհին չես դուն տէր,  
 ու շանթարձակ ամպերէն վար չես իջներ,  
 Թէ չես տեսներ մեր կիրքերուն խօլ ալիք,  
 Թէ մեր տենչեր քեզ կ'երեւան խաղալիք,  
 Փըրրէ, ապա մեր ըղձանքին խօլ թեւեր,  
 Դէմքիդ վրայ ձգէ քօղեր ու ըստուեր,  
 եւ աշխարհի ցած իրերուն մէջ եւ եթ  
 Թող ցնորքներս, տենչս ու հոգիս թաղուին գէթ,  
 Իսկ դուն երկինք, տարրերու մ'ջ անզայ  
 Իշխէ, յաւէտ, ուր ոչ քնար, ոչ սիրտ կայ:

Այսպէս է վերջանում «Երկինք» վերնագրի տակ նրա սիրուն ոտանաւորը, ուր փիլիսոփայութիւնն ու բանաստեղծութիւնը այնպէս գրաւիչ կերպով հիւսուել են իրար:

Միպիլ ձանաչում է մարդկային հոգին, այդ լայկան ու քմահաճ երեխան, որ շարունակ արցունք է թափում այն բուրբի համար, ինչ անցնում է, ինչ խուսափում է նրանից անդառնալի կերպով, և գիտէ միևնոյն ժամանակ անողորմ ու անփոյթ լինել դէպի այն, ինչ բռնած ունի իր ձեռքում: Հոգու

այս հակասական յատկութիւնը բանաստեղծօրէն ընորոշելու համար գրեթէ նկարչական ճշտութեամբ զծագրուած պատկերներ է տուել, որոնք բոլորն էլ «անցնելու մօտ» են և որոնց առաջ հէնց այդ պատճառով լուս դողում է մարդը: Դժուար է աւելի գեղեցիկ կերպով պատկերացնել մեր ծանր ափսոսանքն ու կսկիծը անցնող գեղեցկութիւնների համար, որոնց հետ կապուած է մեր էութիւնը:

Մենք չենք սիրեր կեանքն յորդաշունչ կենդանի,  
Անցնելու մօտ իրերն զմեզ կը կարծեն,  
Մենք կը սիրենք, երբ արեւը ծիրանի՝  
Հալած, հատած մոմի նման ոգեվար՝  
Այիքներուն զոգն ինչպով շիջանի,  
Սողոսկելով խարակներէն զառիվար:  
Ծաղիկները, զուր կը թողունք, որ ցամքին,  
Թօնուտ օդին, ցուրտ արեւուն տակ աշնան,  
Թռումելու մօտ յանկարծ կարծես կ'անուշնանա:

Այդպէս էլ մեր սէրը՝ որ շատ անգամ ինքներս կ'արհա-  
մարհենք ու կը վիրաւորենք, հէնց որ թե առնի մեզնից խու-  
սափելու համար:

Դողըղայով մեր հոգւոյն մէջ կը սեղմնը,  
Մրմունջները, որոնք հեռուն կը մարին,  
Կոչնակները, հաջիւնն անգամ շուներուն,  
Գորշ ամպերն իսկ փակած կապոյտ կամարին,  
Մեկնելու մօտ հմայք մ'ունին օրօրուն:

Սէրը դէպի այն ամենը, ինչ գրաւիչ է կեանքում, այսպիսով դառնում է մի անգիտակցական բողոք, համարեա մի յարատե պայքար մահուան իշխանութեան դէմ, որից մենք դողում ենք և որի հետ հաշտուել չենք ուզում: Ամենացնորական, դիւթիչ վայելքները վերջիվերջոյ մեզ համար դառնում են մի անգամայն անարժէք, յաճախ ձանձրալի, քանի մենք չենք տեսնում մահուան գունատ ստուերը, որ մեղմիւ սողում է բոլոր կեանքերի յետևից: Բաւական է մի թեթեւ կասկած, թէ նրա յաղթանակը մօտ է, որ մենք երկու ձեռքով կախուենք խուսափող իրերից, և մեր քնած սէրը զարթնի հսկայական չափով, որ մենք անիծենք մեր ճակատագիրը, և՛ կեանքը, և՛ մահը:

Յուզմունքներն ալ կը վրդովե՞ն մեր հոգին  
Եթէ չըլան երազի պէս թեւաւոր.  
Եւ կեանքն արդեօք կ'ըլլա՞յ այնքան թանկագին,  
Այնքան անուշ, երբ չը սպառնայ մահն անոր:

Սիպիլ մի մույլ, թախճոտ վատատես է: Եւ նրա վատա-

տեսութիւնը դառնում է էլ ակելի ցաւոտ ու անյոյս, որովհետեւ շնորհիւ հազուագիւտ, նուրբ ճաշակի, գեղեցկութեան դանազան երանգներն ըմբռնելու իր խորունկ կարողութեան՝ նա փոռում է ընթերցողի առաջ ընութեան խորհրդաւոր հմայքը, նրա հազար ու մի գոյների խաղը, կեանքի վայելքները, հոգու սքանչելի յատկութիւնները և անմիջապէս յետոյ՝ այդ բոլորի մահը: Սայտաբղէտ թռչունների երամի պէս անցնում են առաջիցդ վառ պատկերներ, վարդ երազներ, երկնային ցնորքներ, և՛ յոյզ ու սէր, և՛ ժպիտ ու յոյս, և՛ բոյր ու խինդ, և՛ բոլորի վրայ մահուան կնիքը, բոլորին դիպել է նրա շունչը: Բոլոր գեղեցկութիւնները խայտալով՝ դէպի ոչնչութիւնը, դէպի անդարձ մահն են դիմում: Ահա թէ ինչո՞ւ ամբողջ ընութիւնը՝ Սիպիլի գրչի՛ տակ, դառնում է մի հսկայական դամբարան, ուր՝

Չոր տերեւներ՝ դօս, ցեցակեր, բըզըկտուած ու կարկամ

Գետինն վրայ դեփ դեղին

Թսւփերուն տակ կը մնան միշտ, իբրև յետին բարեկամ

Փարած՝ հողին ու ցեխին:

Ժըպիտները ճառագայթէ փրթնումներով՝ կը մարին

Շրթունքներու վրայ լուռ,

Հընչուն ծիծաղն արծաթի, մինչև հասնի կամարին,

Կ'ըլլայ փշուր ու փշուր:

Եւ այս բոլորի փոխարէն մարդուն բաժին է մնում միշտ հրաժեշտի կսկիծը, լքումները, սիրոյ պատրանքը և ունայնութեան կիզիչ, կսկծեցնող ցաւը:

Դեղեցիկ է «Մենաստանին կոյսը»: Դարձեալ մի ուժգին բողոք մահուան դէմ, բռնի ու դանդաղ մահուան, որ կենդանի թողնելով մարմինը, հիւժախտի է դատապարտում երիտասարդ կնոջ հոգին՝ մենաստանի տամուկ մթնոլորդի մէջ: Սիպիլն այստեղ կին է և նրա բողոքը հէնց այդ պատճառով ստանում է մի արագիքական վեհութիւն: Կնոջ սիրտն է խօսում ազդու շեշտով՝ պահանջելով այն, ինչ նրան մայր ընութիւնն է տուել — կեանք և սէր, որոնց հետ կապուած է տիեզերքի արարչագործ զօրութիւնը: Այստեղ էլ բանաստեղծը մի նկարիչ է, ինչպէս միւս բոլոր երգերի մէջ.

Կէս զիշեր է. սննեակիս մէջ միայնակ,

Կանթեղ չ'ունիմ, ոչ էլ երկինքն ունի չ'ող-

իր լոյսն յետին մարեց դարպասն ու տնակ,

Եւ մնացի իմ խոհերուս հետ մաշող:

Եւ իր միայնութեան ու անձկութեան այս խորհրդաւոր ժամին, երբ համայնատարած լուսութիւնը գիշերային՝ կարծես մեղմիկ փափսում է դիւթիչ գաղտնիքները կեանքի ջահել կոյսի

հոգու մէջ զարթնում են աշխարհային իդէերը, ապրելու, վայելելու բուռն տենչը:

Ապրիլ կ'ուզեմ, անոնք երկինք ցոյց կուտան,  
Սիրել կ'ըզմամ կը զոչեն ասէր է Աստուած:  
Բոցեղ շունչ մը կը խնդրեմ ես, սիրտ մը տաք,  
Որ խառնըի տենդոտ հոգւոյս յորձանքին:

Բայց ողջախոհ, բարեպաշտ ու սլառաւ մայրապետը նրա բարձի տակ դնում է մի սաղմոս և կրծքից մի խաչ է կախում սրտի փորձանքները վանելու համար: Ոչինչ չի օգնում. երիտասարդ կրծքի տակ կեանքը յախտուռն է և արգելուած փորձանքների կարօտը այրող:

Այդ փորձանքներն ես կ'երազեմ անդադար,  
Կեանքի բոլոր մեծ սրայքարներն, հուրն անհուն,  
Աշխարհի մէջ չնչին բաժինս իմ արդար,  
Եւ կը թողում երկինքն իրեն սուրբերուն

Գաղափարներով ինչպէս տեսանք, շատ հարուստ է Սիպիլ համարեա բոլոր նրա տաղերը նուիրուած են մայրութեան, կանացիութեան, գեղեցկութեան և առհասարակ աշխարհի իրերի ունայնութեան, նրանց անխուսափելի վախճանին: Եւ սակայն մահուան գաղափարին զուգընթաց և նրան դիմադրաւող Սիպիլ երգում է զոհի անձնուիրութեան իդէան, որ զարդարում է և ոյժ է տալիս մեր խեղճութեանը, խորհուրդ՝ մեր գոյութեանը, և ապրելու ձանձրոյթը փարատում: Մայրութիւն, կանացիութիւն, գեղեցկութիւն և բոլորն՝ ինչ արարարչութիւնը հաճոյքով է պարգևել աշխարհին, նախասահմանուած զոհեր են մի անյայտ նպատակի համար, որ խուսափում է մարդկային մտքից: Բոլորը սիրում են, լալիս ու զոհուած:

Ամպը, որ լողում է լուսեղէն բարձունքում, երկնքի մէջ, «լուսնի աշխարհն արծաթի» իր թևերի վրայ տանում է բանաստեղծի երազները: Նրանց ճակատագիրը նոյնն է, երկուան էլ սիրում են, երկուան էլ ուխտուած զոհեր են մի մի բարձր իդէալի: Ամպը փշրւում է «հովերու բիրտ հարուածին տակ» երկիրը ցողելու համար և նրա «փշրանքէն տաք-տաք արցունք կը կաթի», իսկ բանաստեղծի հուր տենչանքները նոյնպէս շիրիմ են գտնում հողի մէջ: Եւ երկինքը դարձեալ ժպտում է՝

Մինչ մենք զոհեր սիրոյ անհուն պապակին՝  
Անձրեւ կուլաս դուն, ես՝ արցունք ցուազին:

Մի ուրիշ տեղ աղօթող կնոջ սիրտը նման է խունկով լի բուրվառի, որ տաճարի կամարների տակ՝

Խունկին պիս լըռին հըրարքով կ'եռայ:

Բոլոր տաղերի մէջ, Սիպիլ մնում է, որպէս մի իսկական

գեղարուեստագէտ իր պատկերների ճոխութեամբ, բազմազանութեամբ և նկարչական ձիրքով: Նա համարեա գաղափար չի յայտնում, որ իսկոյն նրան համապատասխան մի գրաւիչ պատկերով չճոխացնի: Այսպէս աշուճը նրա համար մի «վիրաւոր այրի հարս է»: արցունքները կը մաղուին, ինչպէս «սև ժանեակներ գոհարներու շարքով բանուած»: հիւանդ աղջրկայ գունատ դէմքը յիշեցնում է «ծաղիկ մ' որ սրահին խուսափուկ ստուերին մէջ ծըլած՝ լոյսէն կը խորշի»: Ողջ բնութիւնը նրա համար մի կենդանի բարբառ է: Մի իսկական բանաստեղծ ուրիշ կերպ չի էլ կարող վարուել: Մարդկային լեզուն մեր հոգեկան յոյզերը արտայայտելու համար չափազանց անկատար միջոց է, և նրանք, որոնք կոչուած են թարգման հանդիսանալ մեր հոգիների մէջ քնած համբ զգացմունքներին, բնութիւնը մեր փոխարէն խօսեցնելու սքանչելի կարողութիւնով են օժտուած են:

Սիպիլ՝ որպէս սիմվոլիստ բանաստեղծ՝ չի բաւականանում պատկերների արտաքինով, այլև նրանց ներքին ժողշապատ խորհուրդն է փոխ առնում արտերի մունջ լեզուն ճոխացնելու համար: Այսպէս տաճարի մէջ՝ «պաղատանքներու սարսուճներ երկայն կամարներուն տակ կը մարին տակաւ», նոճիները տրտում են, ինչպէս «մահն ու իր յուշեր» և աղանչիները՝ «ճերմակ փրփուր թևերով» անցնում են երկնքի երեսից՝ «եթերին մէջ թափթրփելով անբիծ անուրջը ձիւնին»: Ստուերներ կան, որոնք տխուր մտքի ուրուականներն են,

կը թափառին շուրջս ըստուերներ թանձրահոծ

Եւ կը լսեմ իրենց վայիւնն ողբակոծ:

Չնայելով տեղ-տեղ այսպիսի պատկերների մթութեան, այնուամենայնիւ, Սիպիլի լեզուն ազատ է սիմվոլիստներին յատուկ խաւարից, և թիւրքահայ գրողների անօգուտ, ձանձրալի, յաճախ արուեստական ճոռումբաբանութիւնից, երբ բառերի ճոխութեան տակ երբեմն ծածկուած է լինում այնքան դատարկութիւն: Նրա տաղերը միանգամայն պարզ են, անշուշտ նրանց համար, որոնք հայերէն ասելով հասկանում են մի գրական մշակուած լեզու, և ոչ կացինով տաշած՝ օտարաբանութիւններով լեցուն մի բիրտ բարբառ:

Ցանկալի էր, որ Սիպիլի «Յուշերը» կարդացուէին մեզանում, մանաւանդ հայ կանանց շրջանում, համոզուելու համար, որ հայերէնը կոշտ է միայն տգէտների շրթունքներում և որ՝ նա գեղեցիկ երաժշտական դարձուածքների անհուն գանձեր է պարունակում:

Ա. Անարոնեան